«Starmus VI 50 տարի Մարսի վրա» միջազգային փառատոն

Սեպտեմբեի 5-11-ը Հայաստանում անց է կացվելու «Starmus VI 50 տարի Մարսի վրա» միջազգային փառատոնը, որի շրջանակներում սեպտեմբեի 8-11-ը անվճար նախատեսվում է կազմակերպել գիտության ճամբար (Science Camp) ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից տարածքը վերածվելու է գիտության ու տեխնոլոգիաների մասշտաբային կենտրոնի, որտեղ ամենահասանելի ձևաչափերով մեծ թեմատիկ տաղավարներով փոքրերին ու մեծերին կներկայացվեն գիտության նորագույն նվաճումներն ու ձեռքբերումները՝ «Աստղաֆիզիկա», «Լազերային ֆիզիկա», «Դրոններ», «Ռոբոտաշինություն», «Արհեստական բանականություն», «ԱգրոՏեխ», «Միջուկային էներգիա», «Համաճարակաբանություն», «Երկրաշարժի ուսումնասիրություններ», «Կապույտ կանաչ մոլորակ», «Աստղադիտակներ», «Կենդանաբանություն և բուսաբանություն», «Աջակցող տեխնոլոգիաներ», «Տիեզերական և արհեստական արբանյակներ» թեմաների շուրջ:

Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է https://www.starmus.com/banner-content/starmus_camp կայքում: